



# Այունյաց երկիր

ՀԱՐԱԹ  
27 ԴԵԿՏԵՐԵՐԻ 2014Թ. № 35 (343)

www.syuniacyerkir.am

**Եվ քեզ՝  
Նոր ու սուրբ  
Նոգուդ հե՛ս  
Հավե՛րժ փառք,  
իշխանություն:**  
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ  
«ՍԱՅՅԱՆ ՈՂԵՐԳՈՒԹՅԱՆ», ԲԱՆ ԴՂ, Բ



## ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Θαί ε»ε  
Ε άñ»Υ³όϚ

*Խորհուրդն է մեծ եւ սրանչեյի,  
Որը այսօր հայրնւյեց,  
Նովիվները երգում են հրեշտակների  
հեպ՝  
Ավերիս եւ փալիս աշխարհին:*

*Ծնվեց նոր արքա  
Բեթղեհեւ թաղարում.  
Սերունդներ մարդկային, օրհնեցե՛ք,  
Քանզի մեզ համար մարմնացալ:*

*Նա, ում բավելի չեն երկինք ու երկիր,  
Թողեց, որ իրեն խանձարտրով  
սրարեն.  
Չգաղվելով իր Նորից՝  
Սուրբ քարայրում քազմեց:*

\*\*\*

*Լոյս, լոյսի մայր  
Եվ կենարար էության բնակարան,  
Քեզ երանի եւ փալիս ցեղերն,  
ազգերն ամենայն:*

*Մայր սրեղծողի  
Եվ բնության կերպը նորոգողի,  
Քեզ երանի եւ փալիս ցեղերն,  
ազգերն ամենայն:*

*Լոյս ծագեց քեզնից՝  
Խալարում նստածներիս համար,  
Քեզ երանի եւ փալիս ցեղերն,  
ազգերն ամենայն:*

## ՀԱՅԻ ՈԳԻՆ

### ՀՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Անհատներ կան, որոնք ապրում են եւ նշանավոր են միայն նրանով, որ մի բարձր պաշտոն ունեն կամ աստիճան: Առեք նրանցից էլ պաշտոնը կամ աստիճանը՝ կտեսնեք՝ օխող կորածի միջոց: Մարդիկ էլ կան, որ առանց իշխանության էլ, թեկուզ նույնիսկ ծախորդության ու հալածանքի մեջ, միշտ երեսուն են իրենց ինքնուրույն կերպարանքով, ուժով ու շնորհքով: Էդպես են եւ մարդկային ցեղերը: Պատմությունը ցեղեր է հիշում, որ իշխել ու նշանավոր են եղել, քանի որ ունեցել են քաղաքական ինքնուրույն իշխանություն, զենքի զոր ու ֆիզիկական ուժ. հենց որ կորցրել են քաղաքական անկախությունը, հետզհետե հալվել են ժողովուրդների մեջ ու կորել: Ցեղեր էլ կան, որ քաղաքական անկախ կյանքը կորցնելուց հետո էլ կարողացել են պահել իրենց ազգային կերպարանքը երկար դարերի ընթացքում, ամեն տեսակ հալածանքների տակ: Իհարկե, ծանր է եղել միշտ էս մաքառումը եւ բարոյական ու ֆիզիկական կորուստները անվերջ, բայց այնուամենայնիվ նրանք չեն կորել ու կան: Էդ ժողովուրդներից միմե է անշուշտ մեր դժբախտ ցեղը, որ քաղաքականորեն անկախ չի եղել գրեթե երբեք, որ իր գոյության տարիներից ավելի շատ կարող է կոտորածներ համարել, եւ սակայն էսօր էլ տակավին կա իր լավ թե վատ՝ ազգային կյանքով ու կերպարանքով: Գիտությունը, լուսավորությունը մարդկա-  
ՇԱՐՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԷՏ 8

## Եվրասիական փնտեսական միությունն. գործնական մեկնարկը փրված է

**Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում ավարտվել է Եվրասիական փնտեսական բարձրագույն խորհրդի նիստը՝ նվիրված 2015թ. հունվարի 1-ից Եվրասիական փնտեսական միության եւ դրա մարմինների գործունեության մեկնարկի գործնական ասպեկտներին:**

Նիստին մասնակցել են 33 նախագահ Սերժ Սարգսյանը, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը,

Ղրղզստանի նախագահ Ալմազբեկ Աթամբաևը եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Վիկտոր Խրիստենկոն, ովքեր միասին արդյունքներն ամփոփել են համատեղ մամուլի ասուլիսում:

Նախագահ Սերժ Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ղեկավարներին՝ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի միանալու հարցում աջակցության համար, նաեւ նշել այդ երկրների համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների, Եվրասիական

տնտեսական հանձնաժողովի կատարած մեծ աշխատանքը եւ բոլորին մաղթել հաջողություններ հետագա գործունեության մեջ:

Այդ օրը երեկոյան Մոսկվայում 33 նախագահի կեցավայրում «Արարատ Պարկ Հայաթ» հյուրանոցում, նախագահ Սերժ Սարգսյանի անունից տրվել է ընդունելություն Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի միանալու գործընթացի ավարտի կապակցությամբ:

president.am  
23.12.2014



**ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**  
Սյունիքի մարզպետ

**Ս**յունիքի սյունեցիներ Շնորհավորում են ձեզ Ամանորի և Սուրբ ծննդի տոների կապակցությամբ, մաղթում են բարօրություն, առողջություն և երջանկություն, իսկ մեր հայրենիքին՝ խաղաղություն, բարեկեցություն, համամարդկային արժեքների վրա խարսխված առաջընթաց ու զարգացում:

Անառարկելի պատմական փաստ է, որ Սյունիքը եղել է, կա ու կմնա «հայոց արեւելից կողմաց» անառիկ ամրոցը, եւ նաեւ Սյունիքի հզորությամբ են պայմանավորված մեր երկրի պաշտպանունակությունն ու կայուն առաջընթացը: Մենք հաղ-

թահարեցինք մեր պատմության ընթացքը կանխորոշող տարիներից եւս մեկը՝ 2014-ը, եւ վստահ ենք, որ Սյունիքը, թեակոխելով 2015 թվական, կշարունակի զարգանալ, հզորանալ ու բարգավաճել:

Գալիք տարում Սյունիքում կիրականացնենք տասնյակ տնտեսական ու սոցիալական ծրագրեր, որոնք կնպաստեն մեր մարզի բնակչության ապահովության եւ բարեկեցության աճին:

Սիրելի հայրենակիցներ, Ամանորն ավանդական ու ամենասիրված ընտանեկան տոնն է, որին սպասում ենք անհամբեր՝ ջերմությամբ, երազանքներով ու ակնկալքներով: Ուստի մաղթում ենք, որ Նոր տարին սեր բերի բոլորիս ընտանիքներին, որ հետեւուն մնան բոլոր դժվարություններն ու հոգսերը, անհաջողություններն ու ծախողումները:

Թո՛ղ 2015թ. սյունյաց յուրաքանչյուր օջախից ելնող ծուխն ավետի շենություն ու առատություն, իսկ տոնական սեղանների շուրջ տիրեն բարձր տրամադրությունն ու լավատեսությունը:

Թո՛ղ Նոր տարին խաղաղություն, արելաշատություն և բարիքների առատություն բերի հայոց ընտանիքներին ու մեր երկրին:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ ծնունդ:



**Տ. ՍԱԿՅԱՆ ԿՐԻ. ԶԱԿՈՒՅԱՆ**

Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ

**Ս**յունյաց թեմի եւ աստվածավախ սյունեցիների անունից մեր սրտագին շնորհավորանքներն ենք հղում հայ ժողովրդի զավակներին Ամանորի և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ ծննդի և Աստվածաշայտնության հոգեպարար տոների առթիվ:

Թո՛ղ 2015 թվականը սկզբնավորվի «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» հրաշագործ ավետիսով եւ նույն ոգեղենությամբ շարունակական ընթացք կրի ողջ տարին:

Թո՛ղ 2015 թվականը լինի խաղաղության, բարեկեցության, սիրո և հոգեւոր ներդաշնակության ավետաբերը՝ համայն հայությանը պարգեւելով հաղթանակների և նորանոր նվաճումների անսփերկրանք:



**ՆԻԼ ԱՍԻԿԵՆՍՈՆ**

«Զանգեզուրի կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն

**Ս**իրելի բարեկամներ «Զանգեզուրի կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենության անունից ընդունեք ամենաջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքները Նոր տարվա և Սուրբ ծննդյան տոների հաճելի առիթով:

Մեր հայրենիքի, Սյունյաց աշխարհի, մեր ձեռնարկության հետագա զարգացման ու բարգավաճման անխտոր հավատով ենք Ձեզ հետ միասին ուղղում մեր՝ 2015 թվական, որը մեր բոլորի համատեղ ջանքերով, ազնիվ ու նվիրված աշխատանքով դառնալու է արտադրական նոր ձեռքբերումների, մարդկանց բարեկեցության հետագա բարձրացման, խաղաղության ու առաջխաղացման ժամանակաշրջան:

Կոմբինատի ղեկավարության, բոլոր աշխատակիցների ջանքերն այսօր ուղղված են, նախաձեռնաբար, մեր երկրի առաջընթաց հզորացմանը, նրա տնտեսական անվտանգության ապահովմանը, ինչի գլխավոր շարժիչ ուժը բարիք ստեղծող մարդն է: Սա է պատճառը, որ մեր նախաձեռնած բոլոր ծրագրերը, որոնք կապված են բնակչության առողջապահության կազմակերպման, կրթության, սոցիալապես խոցելի խավերին աջակցելու, սոցիալական բաղադրիչ ունեցող բազմաթիվ այլ ձեռնարկումների հետ, ոչ միայն ամբողջությամբ իրականացվելու և շարունակվելու են, այլ նաեւ կյանքի են կոչվելու մեր, աշխատավոր մարդուն սատարելուն միտված ծրագրեր:

«Բարեկեցություն բոլորի համար» սկզբունքը լինելու է ինչպես 2015 թվականի, այնպես էլ առաջիկա տարիների մեր գլխավոր կարգախոսը: Մենք անսասան կանգնած ենք երկրի տնտեսական հզորությունը ստեղծող աշխատավոր մարդու ֆիկուսին և մեզ ապավինած մարդկանց երեք հուսախաբ չենք անի: Մենք մտահոգված ենք ոչ միայն կոմբինատի աշխատակիցների, քաջարանցիների, այլ նաեւ յուրաքանչյուր սյունեցու բարեկեցությամբ, մեր չքմաղ երկրի բնության պաշտպանությամբ:

Կրկին շնորհավորելով Ձեզ Նոր տարվա և Սուրբ ծննդյան օրվա կապակցությամբ՝ Ձեզ եւ Ձեր ընտանիքներին, մերձավորներին ու բարեկամներին մաղթում ենք խաղաղ երկինք, արգասավոր ու ստեղծարար աշխատանք, առողջություն ու բարեկեցություն՝ ի փառս մեր անզուգական Հայաստան աշխարհի և հերոսական Արցախի:

Շնորհավոր Նոր տարի...

# Խոսք Նոր տարվա և Սուրբ ծննդի առիթով



**ՏԻՐԱՆ ՓԱՐՎԱՆՅԱՆ**  
գնդապետ, 1-ին բանակային զորամիավորման հրամանատար

**Ս**իրելի սյունեցիներ, սիրելի զինծառայողներ Մեր զորամիավորման փառահեղ տարեգրությունը հարստացավ եւս մեկ տարով:

Արժեւորելով անցած տարին՝ կարող եմ հպարտությամբ ասել, որ, ի հեճուկս հակառակորդի, զորամիավորման ենթակա ստորաբաժանումները հաջողությամբ կատարեցին 2014թ. ուսումնական տարվա պլանով նախատեսված բոլոր մարտական խնդիրներն ու առաջադրանքները: Մասնավորապես, բարձր արդյունքներով անցկացվեցին մի շարք հրամանատարաշտաբային, մարտավարական զորավարություններ՝ ենթակա զորամասերի, զորխմբերի մասնակցությամբ, որոնցում կարեւոր տեղ զբաղեցրեց իր մասշտաբներով աննախադեպ «Միասնություն-2014» խորագրով օպերատիվ մարտավարական զորավարությունը: Ծանրակշիռ մասնակցություն ունեցան ու հիանալի արդյունքներ արձանագրեցին նաեւ մեր զինծառայողները:

1-ին բանակային զորամիավորումը Սյունիքի մարզի անբաժանելի մասն է դարձել, համախումբ եւ միասնական է նրա ժողովրդի հետ, եւ անցնող 2014 թվականին ձեռք բերած բոլոր հաջողություններն էլ ընդհանուր, բոլորինս են:

Դրա վառ վկայությունն էին ուսումնական տարվա ընթացքում տարածաշրջանի բնակչության հետ համատեղ անցկացված մի շարք միջոցառումները, ուսանողների և դպրոցականների հետ կայացած ուսանելի, բանակ-հասարակություն կապերն ամրապնդելուն միտված հանդիպումները:

Անշուշտ, պետք է առանձնացնել Գորիսի Սուրբ Գրիգոր Տաթևացու հրապարակում անցկացված, զորամիավորման կազմավորման 18-րդ տարեդարձին նվիրված մեծ զորահանդեսը, որին իր մասնակցությունը բերեց ու շնորհավորանքի խոսք ասաց նաեւ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Սյուս կարեւոր միջոցառումն Անկախության օրվան նվիրված զորահանդեսն էր, որին, մեր զինծառայողների հետ միասին, հիանալի անակնկալ մատուցեցին Գորիսի բազմաթիվ նախակրթական, այլ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ, սաներ:

Հնարավոր չէ դիտարկել սյունեցուն եւ նրա զինվորին առանձին-առանձին: Նրանց միասնականությունը դարերն են կնքել: Մարզն իրենով արդեն իսկ հզոր է՝ իր առանձնահատուկ զինվորապիროնությամբ, զինվորանվիրվածությամբ, իր տարածքով ու ժողովրդով, իր անցյալ ու ներկա հերոսական տարեգրությամբ, հայոց պատմության մեջ լուսավոր էջեր թողած իր հայրե-

նապաշտ իշխաններով, հին ու նոր ժամանակների ազգանվեր քաջ որդիներով, զինակազմներով, արվեստի ու մշակույթի գործիչներով, իր հոգեւոր-մշակութային արժեքներով՝ Տաթևի հոգեւոր համալիր-կենտրոնով:

Հպարտ են եւ ուրախ, որ մեր զորամիավորումը տեղակայված է Սյունիքի մարզում, որի արմատները հերոսական Սյունիքի դարերի մեջ են մխրճված, իսկ սաղարթները թրծվել են Արցախյան գոյամարտում: Չորամիավորման առկայությամբ այսօր Սյունիքի հզորությունը կրկնապատկվել է, եւ, Աստված մի արասցե, եթե մի նոր պատերազմական փորձություն պատուհասի, համոզված ենք՝ Սյունիքի ժողովուրդը նորից ոտքի կելնի եւ կկանգնի իր զինվորի կողքին:

Ուրախությամբ պետք է ասեմ, որ զորամիավորման յուրաքանչյուր զինծառայողի եւ մարզի ժողովրդի միջեւ հաստատված սերն ու նվիրվածությունը փոխադարձ են: Մենք՝ բոլորս՝ հրամանատարից մինչեւ շարքային, սիրում ենք քաջերի այս հողը, նրա ժողովրդին եւ պատրաստ ենք հակառակորդի յուրաքանչյուր ոտնձգություն, ինչպիսին թշնամու օգոստոսյան դիվերսիաներն էին, կանխել, արժանի հակահարված տալ, սրբորեն պաշտպանել Սյունիքը՝ մեր երկրի կարեւորագույն հարավարեւելյան դարպասը, նրա հպարտության ու հարստության շտեմարանը:

Այս տոնական առիթով բոլորիս պարտքն է հիշել հայրենիքի համար սրբացած մեր հերոսներին՝ հանուն հայրենիքի զոհված մեր բազմաթիվ հայորդիներից մինչեւ արտերկրի ռազմաբազաներում վարժված

թշնամու մեծաքանակ դիվերսանտներին հերոսաբար դիմակայած, անմահների շարքը դասված մեր զինվորն ու սպան, մինչեւ վերջին խոշորամասշտաբ զորավարության ժամանակ ուսումնամարզական թռիչք իրականացրած ԼԴՀ ՊԲ-ի ուղղաթիռներից մեկի անձնակազմի օդաչուները, մինչեւ միանգամայն վերջերս թշնամու դիվերսանտների ոչնչացման ժամանակ հերոսաբար զոհված մեր ամնաի զինվորը:

Ինչպես ասաց մեր պաշտպանության նախարարը, նրանց մենք չկորցրինք, այլ գտանք իրապես:

Փառք նրանց անմար հիշատակին:

Սյունիքի ողջ ժողովրդին, որի անբաժանելի մասն ենք նաեւ մենք՝ զորամիավորման զինծառայողներս, Ամանորի և Սուրբ ծննդի աստվածապարգեւ տոների կապակցությամբ բարեմաղթում ենք 2015 թվականին եւ միշտ՝ խաղաղություն, ամուր առողջություն և բարեկեցություն:

Թո՛ղ իր հպարտ լեռների պես մշտապես անսասան եւ ամուր մնա սյունյաց դարպասը, սյունեցին հարստեւ լծվի խաղաղ եւ շինարար կյանքի:

Թո՛ղ մեր մարտունակ զորամիավորումն իր մարտական պատրաստականությամբ եւ զինվորական կարգապահությամբ էլ ավելի զորեղանա, նրա ամեն մի զինվորը, որ նվիրյալ եւ հայրենիքին ցնաի որդեգրված է, դառնա սյունյաց անառիկ լեռներից՝ բերդ-ամրոցներից մեկը եւ սրբորեն պահպանի հայոց հողի խաղաղությունն ու անդորրը:

Թո՛ղ բոլորս մշտապես գտնվենք շարքում:

Շնորհավոր բոլորիս Ամանորը:



# ՀԱՊԿ առաջնորդները կողմ են ԼՂ խնդրի բացառապես խաղաղ կարգավորմանը

**ՀԱՊԿ անդամ երկրների ղեկավարները նշել են դարաբաղյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը: Այս մասին ասված է ղեկավարների 23-ին Մոսկվայում կայացած ՀԱՊԿ խորհրդի նիստի ավարտին ընդունված ՀԱՊԿ անդամ երկրների ղեկավարների համապետել հայտարարության մեջ:**

*«Մենք՝ ՀԱՊԿ անդամ երկրների ղեկավարներս, նշում ենք նաև դարաբաղյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը՝ ընդգծելով ԵԱՀԿ ՄԽ համանախագահների ջանքերով այդ հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքների ուղղությամբ աշխատանքը շուտափույթ ավարտելու կարևորությունը՝ Միջազգային իրավունքի*

*մոլորների, ՄԱԿ-ի կանոնադրության, Գլխավորների եզրափակիչ ակտի դրույթների հիմքով, որոնք մասնավորապես վերաբերում են ուժ կամ սպառնալիքներ չկիրառելուն, պետությունների տարածքային ամբողջականությանը, իրավահավասարությանը և ազգերի ինքնորոշման իրավունքին»*, – ասված է հայտարարությունում:

news.am



7 նոյեմբերի 2012թ., Մեդրու հեկի հիմնարկների ժամանակ

# Հայաստանն ու Իրանը վերանայում են Մեդրու հեկի շինարարության մասին պայմանագիրը

**«Մեդրու հեկի յուրաքանչյուր բլոկը կարտադրի 100 ՄԳվ հզորությամբ էլեկտրակայաններ», – այդ մասին իրանական «ԻՍԵԱ» լրատվական գործակալության հաղորդմամբ՝ հայտարարել է ԻԻՀ էներգետիկայի նախարար Համիդ Չիթչիանը:**

Համաձայն հաղորդագրության՝ ղեկավարների 15-ին Իրանի մայրաքաղաք Թեհրանում ընթացող հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 12-րդ նիստի շրջանակներում լրագրողների հետ ունեցած հանդիպման

ընթացքում ԻԻՀ էներգետիկայի նախարար Համիդ Չիթչիանը, անդրադառնալով Մեդրու հեկի կառուցման ընթացքին, մասնավորապես նշել է. «Մեդրու հեկի շինարարության մասին պայմանագիրը բարձրագույն է, համաձայն որի՝ հաշվի առնելով Արաքս գետի էկոլոգիայի փոփոխումը՝ իրանական կողմը հայ գործընկերներին առաջարկել է, որպեսզի կառուցվելիք հեկի յուրաքանչյուր բլոկն արտադրի 100 ՄԳվ հզորությամբ էլեկտրակայաններ»:

Հավելենք, որ ԻԻՀ էներգետիկայի նախարար Համիդ Չիթչիանն օրերս տեղեկացրել էր, որ իրանական ըն-

կերությունները շուտով կսկսեն Մեդրու հեկի շինարարության աշխատանքները:

Հիշեցնենք, որ Մեդրու հիդրոէլեկտրակայանի հիմնարկների արարողությունը տեղի է ունեցել 2012թ. նոյեմբերին: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայքի համաձայն՝ մինչ պայմանագրի թարմացումն Արաքս գետի վրա կառուցվելիք Մեդրու հեկը պետք է 130 ՄՎտ հզորությամբ տարեկան շուրջ 800 մլն Կվտժ էլեկտրաէներգիա արտադրեր:

panorama.am

# Որոշ ապրանքների գներ մասամբ կայունացել են

## Ստատիստիկական շուկա

Դեկտեմբերի 18-ին կառավարության հերթական նիստում ՀՀ վարչապետ Գևորգյանի կողմից կայացրած որոշումների փոխարինումը հանձնարարել էր ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական (ՏՄՊ) հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանին մանրամասն ուսումնասիրել որոշ ապրանքատեսակների առևտուրն ամենօրյա կտրվածքով. «Հորդորում են ամենայն խստությամբ մոտենալ այս չարաշահումներին: Կառավարությունն անհիմն բանկացումներ չի հանդուրժելու»: Թե որքանով է ՏՄՊ հանձնաժողովը կարողացել կառավարել գնաճը, դեռ ժամանակի ընթացքում պարզ կլինի, բայց մի բան ակնհայտ է, որ մեկ գիշերվա ընթացքում դրանք սկսեց մասամբ արժեւորվել:

Անհիմն բանկացումները, կարծես, դեռ չեն պատճառաբանվել. չէ՞ որ առևտրականները դեռ չէին հասցրել թանկ գներով ապրանք ձեռք բերել. ո՞վ շահեց փողային այս հարաբերություններում հարցին միգուցե տնտեսագետները պատասխանեն, բայց մենք կարող ենք վստահորեն արձանագրել, որ մարդիկ խուճապի մատնվեցին և դեռ ակնկալում են, որ նախկին գները կվերականգնվեն:

Դեկտեմբերի 17-18-ի գնաճի համապատկերի ու նույնիսկ որոշ ապրանքների անհետացումից հետո դեկտեմբերի 22-23-ին գները համեմատաբար կայունացան շեմին էին: Մասնավորապես շաքարավազն արդեն «հայտնաբերվել» էր՝ 1կգ-ն 470-480 դրամ:

Այլուր, ինչպես նախորդ հրապարակման մեջ էինք նշել («Այուրյաց երկիր», N34, «Մարդիկ շուկի մեջ են, չեն հասկանում» ինչ է կատարվում»), կգ-ով հազվադեպ խանութներում էր վաճառվում, բայց գնի նվազեցում գրեթե չկար. 25 կգ-անոց պարկով այլուրն արժեք 8800 դրամ, որ խուճապային օրերին 9000-ի էր հասել, իսկ մինչ այդ 7000-7500 դրամ էր: Բնական է, որ այլուրի թանկացումը բերեց խանութներում հացի գնի բարձրացման: 515-520 գրամ հացը վաճառվում է 280 դրամով, իսկ որ ավելի հետաքրքրական է, հացի փոքր խանութներին 250 դրամով են հաց տալիս: Նախկինում 230 դրամով խանութը գնում էր, 240-ով վաճառում: Նշենք, որ հացի քաշը ստուգել ենք խանութներում: Ի դեպ, գնորդներից մեկն էլ դժգոհեց, որ դոլարի գերարժեւորման օրերին հացը կշռում էր 450 գրամ և վաճառվում 240 դրամով:

Հիշեցնենք, որ հացարտադրողների հետ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի հոկտեմբերի 7-ի խորհրդակցության ժամանակ որոշվել էր նախկին 500 գրամ հացը դարձնել 600 գրամ և վաճառել 240 դրամով: Այսօր, երբ դոլարի փոխարժեքը համեմատաբար կայունացավ, է, հացի գինը զգալիորեն բարձրացել է: Սա այն դեպքում, երբ գազի և էլեկտրաէներգիայի գները դեռևս չեն բարձրացել, իսկ պահեստներում հաստատ այդ օրերին այլուր եղել է, այնպես չէ, որ այլուր ներմուծել են վերջին մի քանի օրում:

Արևածաղկի ձեթի 1լ գինը, կարելի է ասել, չի փոխվել, շարունակում է գերակայող մնալ 850-950 դրամը, թեպետ հանդիպեցինք նաև 1100 դրամ. երևույթը վաճառողուհին այսպես պատճառաբանեց. «Մենք թանկ ենք ստացել...»:

Չվի գինը նույնպես փոխվել է, թեկուզ մինչ այս խառնաշփոթն արդեն երեւոյթը նկատելի էր՝ 85-90 դրամ:

Նախորդ հրապարակման մեջ անդրադարձել էինք նաև դեղորայքի գներին: Այս անգամ փորձեցինք ճշտել, թե արդյո՞ք դոլարի փոխարժեքի որոշ նվազումը չի մեղմել գները: Պարզվեց, որ այստեղ գնալին մեկ այլ անհասկանալի քաղաքականություն են վարում: Թեպետ կառավարության դեկտեմբերի 18-ի նիստում վարչապետը հրահանգել էր առողջապահության նախարարությանը եւ պատկան մարմիններին վերահսկել դեղորայքի գները:

Նպատակահարմար չգտնելով նշել դեղատների անունները՝ ընդամենը կարող ենք արձանագրել, որ ոչ բոլոր դեղատներն են բարեխիղճ վարվել. ոմանք դոլարի փոխարժեքի նվազմանը զուգահեռ վերանայել են գները, ոմանք շարունակում են օգտվել ստեղծված խուճապային իրավիճակից:

Ինչքան էլ դոլարի փոխարժեքը կարգավորվի, միեւնույն է, առաջին անհրաժեշտության ապրանքների գներն այդ մի քանի օրում այնքան են բարձրացել, որ նվազելու դեպքում անգամ նախկին գինը չի վերականգնվի: Բացի դրանից՝ չէ՞ որ հունվարից նաև կենսաթոշակն է ավելանում. եզրակացությունը թողնում ենք ընթերցողին:

Դեկտեմբերի 23-ի մեր շրջայցի ժամանակ տեղեկացանք նաև, որ այլուրը, շաքարավազը, ձեթը շատ խանութներում պարտքով չեն տալիս: Սա կապակցված է մի սովոր մասի համար արդեն շատ լուրջ կենսական խնդիրներ է ստեղծում:

Գազալցակայաններում նույնպես գների բարձրացում է արձանագրվել. մասնավորապես դեկտեմբերի 22-23-ին որոշ տեղերում 1լիտր 210-215 դրամ էր: Սրանով պայմանավորված՝ Կապանում թանկացել է նաև տաքսի ծառայությունը, մասնավորապես «Կապան» (1-4կմ) և «Դիո» (1-5) տաքսի ծառայությունները նվազագույնը դարձրել են 600 դրամ, իսկ «Մեր տաքսի» պահպանել է նախկին գինը՝ 1-5կմ՝ 500 դրամ:

Առևտրի կետերից մեկում նկատեցինք, որ ներմուծող ծխախոտը 10 դրամով թանկացել է, իսկ մաստակի տեսակներից մեկի գինն անեւուրեք է փոխվել՝ 150 դրամից հասնելով 180-190 դրամի: Վաճառողուհին նշեց, որ առաքիչն անձամբ է փոխել մաստակի վաճառքի գինը:

Ծիշտ է, ուսումնասիրում ենք գները, փորձում եզրահանգում ենք անել, բայց որոշ հարցեր, այնուամենայնիվ, մնում են անպատասխան: Ինչո՞ւ իշխանությունը սկսեց մտահոգվել ստեղծված իրավիճակով միայն այն ժամանակ, երբ դոլարի փոխարժեքը մոտեցավ 620-650-ի նիշին, իսկ գնաճը սարսափելի տեսք ստացավ, ինչքանով ՏՄՊ հանձնաժողովը կանխեց կամ դեռ պիտի կանխի որոշ ապրանքատեսակների գների անհարկի բարձրացումը և, ի վերջո, ո՞ւմ էր ձեռնադրել ստեղծված իրավիճակը, և ո՞վ շահեց դրանից:

Շատ հաճախ «խիղճը երկաթ սնդուկին հանձնած» առևտրականներն արդյոք վախեցան տուգանքներից, թե՞ խիղճն արթնացավ, որ շատ ապրանքատեսակներ գրեթե չթանկացան: Իսկ ինչ վերաբերում է դրամի արժեւորմանը, դրա մասին խոսելը դեռ վաղ է, քանի որ շրջայցի ընթացքում նկատեցինք, որ առևտրականները դեռ շատ ապրանքների գների հարցում կամուկացի մեջ են:

Նշենք, որ նախատոնական այս օրերին դեռևս պասիվություն է նկատվում գրեթե բոլոր խանութներում:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
23 դեկտեմբերի 2014թ.

Նեադարձ հայացք

# Սյունիքի մարզը 2014 թվականին ուշագրավ իրադարձություններ



Ապրիլի 14-ին լրացավ Համո Սահյանի ծննդյան 100-ամյակը: Միջոցառումներ տեղի ունեցան ոչ միայն մայրաքաղաքում, այլև մարզի քաղաքներում ու գյուղերում: Հոբեյանի կապակցությամբ լույս տեսավ «Այունյաց երկրի» բացառիկ համար (8 ապրիլի 2014թ.):

Հունիսի 24-ին Երեւանում տեղի ունեցած «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության բաժնետերերի ժողովում պաշտոնանկ արվեց ընկերության գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանը, ով ընկերությունը գլխավորում էր 1998 թվականից, իսկ 2004 թվականից նաև ընկերության բաժնետերերից է:

2014թ. սեպտեմբերի 4-ին պաշտոնանկ արվեց Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, ով այդ պաշտոնը զբաղեցնում էր 2013թ. հունիս 10-ից:

Նոյեմբերի 2-ին Կապանում ջրատարի վթարման հետևանքով վնասվեց քաղաքի Բաղաբերդ թաղամասի N17 շենքը:

ՎիվաՍելի Կապանի բաժանմունքում բացահայտվեց 751 մլն դրամի հափշտակության դեպք: Հարուցվեց քրեական գործ, իսկ Սյունիքի մարզի սպասարկման կենտրոնների պատասխանատու Աշոտ Կույունջյանը նոյեմբերի 24-ին ձերբակալվեց:

Կապանի կոմբինատի տնօրենի աթոռին ինչ-ինչ հանգամանքներում հայտնված Հրաչ Ջաբրայանի որոշ գործողություններ՝ շարքային հանքագործներին վնաս պատճառած, շարունակվեցին քննվել Սյունիքի մարզային դատարանում: Իսկ հոկտեմբերի առաջին տասնօրյակում կատարված ստուգման արդյունքում կոմբինատում արձանագրվեց 9.5 մլն դոլարի չափով հարկային լրացուցիչ պարտավորություն: Հրաչ Ջաբրայանը խոստացավ ակտը վիճարկել դատարանում:



ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի որոշմամբ Սյունիքի մարզպետ նշանակվեց Սուրեն Խաչատրյանը:



«Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության նոր գլխավոր տնօրեն նշանակվեց Նիլ Ստիվենսոնը:



Սյունիքի հնագույն մայրաքաղաքում՝ Սյունյաց գահագլուխ իշխանների աթոռանիստ եւ եպիսկոպոսանիստ Շաղատում օգոստոսի 28-ին վերածովեց Աբ Գեւորգ եկեղեցին:



ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով «Մեդու ԵՇՇԶ» ՍՊ ընկերության շինարարները (տնօրեն՝ Ազատ Գասպարյան) Ազարակ քաղաքում շահագործման հանձնեցին ռազմական տեխնիկայի ավտոհավաքակայան՝ բացառիկ հնարավորություններով հագեցած: Երեք տարի շարունակ կառուցված հավաքակայանը շահագործման հանձնվեց հոկտեմբերի 24-ին:



Հունիսի 8-ին տեղի ունեցավ Գորիսի քաղաքապետի ընտրություն: Գորիս քաղաքը տասնչորս տարի ղեկավարած Նելսոն Ոսկանյանին փոխարինեց Վաչագան Աղունցը:



Հոկտեմբերի 6-ին աշակերտների եւ ուսուցիչների առջև իր դռները բացեց Կապանի N2 ավագ դպրոցի նորակառույց շենքը, որ փլուզվել էր 2011թ. հունիսի 17-ին:



Ազարակ քաղաքը դարձավ 65 տարեկան. նոյեմբերի 21-ին այդ կապակցությամբ տեղի ունեցան միջոցառումներ:





**ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏԱՆ**  
Կապանի քաղաքապետ

Սիրելի՛ կապանցիներ Անցնող տարվա հետ մեր անկախ պետության պատմության էջերը հարստացան եւս մեկ տարվա իրադարձություններով, որոնց կերտողների թվում նաեւ մենք ենք: Այս տարեմուտը բոլորիս համար թող նոր վերելքների ու նոր բերրիքների սկիզբ դառնա:

Թո՛ղ որ այս նոր տարին բազում երջանիկ պահերի, անթիվ ժպիտների ու հաջողությունների տարի լինի: Խաղաղությունը թո՛ղ իշխի մեր երկրի սահմաններին, մեր օջախներում, մեր սրտերում եւ ամենուր:

Եթե հետադարձ հայացք ձգենք, կտեսնենք, որ անցնող տարվա ընթացքում քաղաքում կան արված շատ աշխատանքներ, լուծում ստացած բազում խնդիրներ: Գալիք տարում այդ աշխատանքները շարունակվելու են: Ակնհայտ է, որ դեռեւս անելու շատ բան կա: Դժվարությունները հաղթահարելու ենք միասին եւ տարեցտարի հասնելու ենք նրան, որ ունենալու ենք բարեկարգ ու գեղեցիկ քաղաք:

Թո՛ղ գալիք նոր տարին լինի արգասաբեր, հայ գինվորը՝ միշտ քաջ ու անվախ, հայ մայրերը՝ անհոգ, անմուկները՝ ուրախ եւ բոլորս՝ երջանիկ:

Բոլորիդ մաղթում եմ ուրախ Ամանոր եւ հաճելի տոնական օրեր, ցանկանում, որ ձեր օջախներում տիրեն խաղաղությունը, երջանկությունը, միասնությունն ու սերը:

Հնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:



**ԱՐԵՎԿԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
Մեղրու քաղաքապետ

Ձիու տարին մոտենում է իր եզրագծին, մեկ տարով էլ է մեծանում այս հին ու հնագույն մուրաբեր: Սովորաբար անցնող ու գալիք տարվա այս ջրբաժանին միշտ ամփոփվում են ծրագրված ու կատարված, նախանշում գալիք տարվա անելիքները, ինչպես նաեւ ավանդույթի համաձայն հնչեցնում Ամանորի բարի հղումներ: Որպես համայնքի ղեկավար՝ իմ եւ մեր համաքաղաքացիների անունից սիրով շնորհավորում եմ մեր հանրապետության ու մարզի բոլոր բնակիչներին Ամանորն ու Սուրբ ծնունդը: Մաղթում եմ, որ 2015 թվականին մեր երկրում թեւածի խաղաղությունը, թո՛ղ գալիք տարին դառնա առավել հանդուրժողականության, կայունության, առատության ու ժողովրդի բարեկեցության տարի:

Թո՛ղ նոր աշխատատեղերի բացման, տնտեսական աշխուժության ու աճի հետեւանքով հայրենի տուն

դառնան օտար ամայի ճամփաներում աշխատանք ու հանգրվան փնտրող մեր հայրենակիցները, թո՛ղ էլ ավելի զարգանան ու հզորանան մեր համայնքները, ասել է թե՛ մեր անկախ երկիրը: Թո՛ղ ժամանակավոր այս դժվարությունները շուտ հեռանան մեր իրականությունից, թո՛ղ նորից արժանավայել ապրեն հայ աշխատավորն ու կենսաբաշակառուն, եւ Հայաստան անկախ մեր երկիրը կարողանա ամհանգիստ այս աշխարհում պահպանել իր արժանապատիվ տեղն ու դերը:

Թո՛ղ 100-ամյա եղեմն հիշեցնող տարեթիվը վերջակետ դնի մեր տխուր հիշողություններին ու մեկնարկ տա միայն հաղթանակների ու հաջողությունների գրանցող ձեռքերում:

Այս պայծառ լավատեսությամբ էլ ասենք՝ գալիք բարի՛, Ամանոր՛, բեր հային ժպիտ, խաղաղ երկինք, ստեղծագործ աշխատանք ու նաեւ ֆինանսական կայունություն:



**ՎՊՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**  
Քաջարանի քաղաքապետ

Սիրելի՛ քաջարանցիներ, այսուհետեւ Պատմության գիրկն է անցնում 2014 թվականը՝ իր հետ շրջելով Քաջարանի տարեգրության եւս մեկ էջ: Մեզնից յուրաքանչյուրն այս օրերին ի մի է բերում տարվա ընթացքում արվածն ու չարվածը, ձեռքբերումներն ու հաջողությունները, թերացումներն ու բացթողումները: Անցնող տարին, որը կարծես մեկ ակնթարթ էր, Քաջարանի համար հաջողությունների, նոր ձեռքբերումների ու ծրագրերի, առաջընթացի տարի կարելի է համարել: Այս ժամանակահատվածում մեր տքնաքան եւ միահամուռ աշխատանքի շնորհիվ կարողացանք դրական տեղաշարժ արձանագրել ոչ միայն քաղաքի արտաքին տեսքում, այլեւ աշխուժություն մտցնել մշակութային եւ սպորտային կյանքում, որոնցով Քաջարանը դարձավ ավելի ներկայանալի:

ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության հայտարարած «Տարվա երիտասարդական մայրաքաղաք-2015» մրցույթին մասնակցության հայտ ներկայացրեց նաեւ Քաջարանը եւ ճանաչվեց 2015-ի «Տարվա երիտասարդական փոխմայրաքաղաք», իսկ արդեն տարեվերջին Քաջարանն արժանացավ ՀՀ նախագահի «Տարվա լավագույն մարզական համայնք» 2-րդ մրցանակին:

Հավատարիմ մնալով մեր սկզբունքներին եւ քաղաքում ձեւավորված ավանդույթներին՝ կարողացանք հավուր պատշաճի նշել բոլոր պետական եւ համաքաղաքային տոնական ու նշանավոր օրերը: Դրանցից ուզում եմ առանձնացնել հատկապես Բանակի օրվա, Տեառնընդառաջի, Կանանց տոնի, Հաղթանակի եւ խաղաղության տոնի, Քաջարանի 56-ամյակի, Ոսուցչի տոնի միջոցառումները, բակային ճամբարների, «Ուսանողական ամառ» փառատոնի կազմակերպումը, որոնց իրականացման գործում իր գերակշիռ դերակատարությունն է ունեցել «Ձանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկե-

րությունը: Ուրախությամբ կարող եմ փաստել, որ արդյունաբերական հսկայի անխափան աշխատանքի շնորհիվ, անկախ երկրում տիրող սոցիալ-տնտեսական վիճակից ու մարդկանց զբաղվածության աստիճանից, մեր համաքաղաքացիներն ապահովված են աշխատանքով, եւ ահա թե ինչու անցնող տարում եւս արտագաղթը չըջանցել է Քաջարանը:

Եթե անցնող տարին հանրագումարի է եզրակացությունների վերջնադրում է, ապա գալիք տարին նոր նպատակների ու ծրագրերի իրականացման հեթեթեղան հնարավորություն է ընձեռում: Ուստի, գալիք 2015 թվականին եւս շարունակելու ենք կիսատ թողած աշխատանքները, ինչպես նաեւ կյանքի կոչչենք համայնքի զարգացմանը միտված նոր ծրագրեր:

Հնորհավորում եմ բոլորիդ, մաղթում՝ առողջություն, սեր եւ բարեկեցություն: Թո՛ղ իրականացնեն բոլոր բարի ցանկություններն ու երազանքները:

Առանձնահատուկ շնորհավորում եմ սահմանի կանգնած յուրաքանչյուր գինվորի, Ամանորի գիշերը հերթապահության իրականացնող ծառայությունների աշխատակիցներին եւ Ձանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի ողջ անձնակազմին:

Հնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:



**ՄԻՒԹԱՐ ԶԱԲԱՐՅԱՆ**  
Ագարակի քաղաքապետ

Սիրելի՛ հայրենակիցներ Առջեւում Ամանորն է՝ տարեսկիզբը ազդարարող տոնը, որը լի է հույսերով եւ սպասելիքներով: Ամեն սկիզբ նախորդի բնականոն շարունակությունն է, իսկ Ամանորն ու Սուրբ ծնունդը առանձնահատուկ խորհուրդ ունեն: Այդ խորհուրդը պայմանավորված է լուսավոր ապագայի հույսով ու հավատով, հավատարմության եւ ներողամտության գիտակցումով, ընտանիքի ու հայրենիքի համդեպ ունեցած սիրով ու պատասխանատվությամբ: Նոր տարվա շեմին յուրաքանչյուրս ակնկալում ենք հաջողություններ եւ արգասաբերություն, սակայն տարին այդպիսին կլինի միայն մեր աշխատանքի շնորհիվ. մեզ սպասվում է լարված, բազմակողմանի աշխատանք, եւ դեպի հաջողություն տանող ճանապարհը պետք է հարթենք մեր հաստատակամությամբ, վստահ գործելաճով: Հավատով ու վստահությամբ տեր կանգնենք մեր արժեքներին, պահպանենք մեր ունեցածը՝ նոր տարում ավելացնելով ձեռքբերումները:

Ամանորի բարեմաղթանքներն են հղում Այոնյաց աշխարհի ողջ ժողովրդին՝ ցանկանալով առողջություն, երկարակեցություն, բարեկեցություն, աշխատանքային եւ անձնական հաջողություններ, արժանապատիվ կյանք, վստահություն սեփական ուժերի նկատմամբ: Լավատեսություն ու կամք եմ մաղթում բոլորիդ, նաեւ՝ հույս, հավատ, սեր, ջերմություն. դրանցով թո՛ղ լցվեն բոլորիս օջախներն ու հոգիները:

Թո՛ղ գալիք 2015 թվականը մեր հայրենիքի համար լինի հաս-

տատուն խաղաղության, ձեռքբերումների, հաջողությունների եւ հաղթանակների, ֆինանսական կայունության տարի: Դիմավորենք 2015-ը նորի ու լավագույնի ակնկալիքով ու հաջողություն մաղթենք մեկմեկու:

Թո՛ղ խաղաղությունը թեւածի ամենուր, եւ Սուրբ ծնունդն աստվածաճաճ գործերի ու հավատքի զորացման ուղեմիջ լինի բոլորիդ: Հնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:



**ՎԱԶԱՍՆ ԱՐՈՒՆՑ**  
Գորիսի քաղաքապետ

Սիրելի՛ հայրենակիցներ Ջերմագին մաղթանքներով շնորհավորում եմ ձեր Ամանորն ու Սուրբ ծնունդը:

Նոր տարին այն տոներն է, որը լի է ուրախ ակնկալիքներով եւ վառ հույսերով: Տոն, որը ոչ միայն համախմբում է մարդկանց, այլեւ թույլ է տալիս՝ մտորելով անցյալի մասին, կազմել ծրագրեր ապագայի համար:

Անցնող տարին լի էր քաղաքական եւ տնտեսական իրադարձություններով, ունեցանք շատ հիշարժան պահեր. նոր ձեռքբերումներ ու հաջողություններ՝ շրջելով մեր քաղաքի պատմության եւս մեկ էջը: Չնայած որոշ դժվարությունների, մեր քաղաքում արձանագրվել է դրական ու արդյունավետ զարգացման աճ: Համակարգված աշխատանքով կարողացանք դրական տեղաշարժեր ապահովել տարբեր ոլորտներում՝ շնորհիվ բոլորիս աշխատանքի, շնորհիվ ձեր վստահության ու նվիրումի:

Իմ պաշտոնավարման մոտ վեց ամսվա ընթացքում փորձել եմ լուծել քաղաքի զարգացման համար իրատեսաբար համարվող խնդիրները, որոնք կապված են աղբահանության, փողոցների սանիտարական մաքրության, թափառող կենդանիների դեմ պայքարի եւ փողոցային լուսավորության բարելավման հետ: Կրոնությունն ունեցանք նոր աղբամաններ, աղբարկղեր, նստարաններ, ավելացել են նոր լուսակետեր, կատարվել են փոսային վերանորոգումներ: Տարբեր ոլորտներում արձանագրված հաջողություններին զուգահեռ տարին հազեցած էր նաեւ մշակութային միջոցառումներով. մեծ շուքով տոնվեց քաղաքի օրը, մեր համայնքում առաջին անգամ անցկացվեց «Թթի փառատոնը»:

Համոզված եմ, որ ձեր վստահության, նվիրումի, ստեղծագործական ու հոգեւոր ներուժի շնորհիվ կարողանալու ենք գալիք տարում կյանքի կոչել նոր ծրագրեր՝ հանուն մեր համայնքի բարօրության:

Հարգելի՛ հայրենակիցներ, մեր քաղաքին, մարզին, Հայաստանի հանրապետությանը մաղթում եմ կայունություն, խաղաղություն, թո՛ղ որ մարդիկ միշտ լինեն ուրախ, առողջ, իսկ նրանց կյանքը՝ բարեկեցիկ:

Ցանկանում եմ, որ 2015 թվականն ամեն օջախ լցնի ջերմությամբ, սիրով, համերաշխությամբ, իսկ հաջողությունը դառնա բոլոր նախագծվող ծրագրերի ուղեկիցը:

Հնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:



**ԱՐԱՍԻ ՀԱԿՈՒՋԱՆՅԱՆ**  
Սիսիանի քաղաքապետ

Սիրելի՛ հայրենակիցներ Ավարտին է մոտենում 2014 թվականը՝ բոլորիս հիշողության մեջ մնալով որպես քաղաքական եւ տնտեսական դժվարությունների հաղթահարման, ապագայի լուսավոր հավատի տարի:

Սիսիանցիներիս համար 2014-ը նշանավորվեց նրանով, որ մեր փոքրիկ քաղաքը հանրապետությունում առաջինը ճանաչվեց երիտասարդական մայրաքաղաք: Սիսիանցի մեկ անգամ եւս հաստատեց, որ, չնայած կյանքի դժվարություններին, պատրաստ է երիտասարդական ակունով հաղթահարել մեզ պարտադրված մարտահրավերները:

Անցնող տարին Սիսիանում անհավասարելաբար ապրեց մշակութային կյանքը: Ավանդական դարձած միջոցառումներին ավելացան նորերը: Երիտասարդության հարցերին նվիրված միջազգային համաժողովները, մեր մեծ հայրենակցի՝ Համո Սահյանի ծննդյան 100-ամյակի առթիվ բազմաբնույթ նախաձեռնությունները, երիտասարդության այգու հիմնումը եւ այլ միջոցառումները նոր, թարմ շունչ հաղորդեցին քաղաքին: Մշակութային ենթակառուցվածքներն ապահովվեցին նոր գույքով, համերգային խմբերը՝ երաժշտական գործիքներով, հագուստով:

Բարեփոխումներ են իրականացվել քաղաքաշինական ծրագրերի ուղղությամբ. տրանսպորտային կանգառների, հասարակական զուգարանների կառուցում, լուսավորության ցանցի ընդլայնում, որոշ փողոցների բարեկարգում եւ տանիքների նորոգում՝ ահա ոչ լրիվ ցանկն այն աշխատանքների, որոնք իրականացվել են քաղաքապետարանի պետական եւ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում:

2014-ի մեր ձեռքբերումների մեջ, սակայն, ինձ անձամբ ուրախացնում են հուսադրում եւ ավելացող ամուսնությունները, եւ, որ ամենակարեւորն է, ծնունդների աճը: 2014 թվականին լույս աշխարհ է եկել ավելի քան 370 փոքրիկ սիսիանցի՝ երեք տասնյակով ավելի նախորդ տարվանից: Իսկ դա նշանակում է, որ, թեպետ ապրվող օրերը լի են բազմապիսի խնդիրներով, սիսիանցի ամուր կապված է իր հողին, լի է հավատով, որ իր երջանկությունն ու ապագան այստեղ է՝ Սիսիանյան աշխարհում:

Թանկագին հայրենակիցներ. սրտանց շնորհավորում եմ ձեզ՝ Ամանորի եւ Սուրբ ծննդյան կապակցությամբ: Խաղաղություն ու բարեկեցություն եմ մաղթում բոլորիդ, ցանկանում, որ 2015թ. ձեր ընտանիքներում իշխեն համերաշխությունն ու երջանկությունը, խիճոն ու ծիծաղը:

Առողջություն եւ հոգու ամրություն բոլորիդ:

Հնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:



# ԱՐԹՈՒՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ. «Լցակայաններում գազի թանկացումը համարում եմ վաղաժամ»

## Տնտեսություն

**Հայաստանյան վերջին օրերի թանկացումները՝ կապված դաշտային փոխարժեքի փոփոխման, դրամի արժեզրկման հետ, գների բարձրացման ակիբ բերեցին նաև բնական գազի լիցքավորման կայաններում:**  
**Նշված երեւոյթի եւ դրա պատճառների, ինչպէս նաեւ անհար բաժանորդներին մատակարարվող գազի գնի հնարավոր բարձրացման մասին է գրույցը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի տնօրէն Արթուր Խաչատրյանի հետ:**

– Պարոն Խաչատրյան, վերջին օրերին ՀՀ արտարժույթի շուկայում տեղի ունեցող իրադարձությունների համատեքստում ենթադրություններ են խոսակցություններ են շրջանառվում, որ այս ամենի հետևանքով կթանկանան նաև բնակչությանը մատակարարվող բնական գազի սակագինը: Այդ մասին ի՞նչ կարող եք ասել Սյունիքի ԳԳՄ բաժանորդներին:

– Ներկա պահին պաշտոնական որևէ տեղեկատվություն մասնադրության մասին չկա: Եթե «Գազպրոմ Արմենիան» թանկացման ծրագրեր ունենա, պիտի առաջարկների փաթեթով մտնի ՀՀ համրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: Այդ հանձնաժողովն է վերջնականորեն որոշում եւ բնակչությանը, եւ խոշոր սպառողներին մատակարարվող գազի սակագինը:

Այսօրվա դրությամբ մասն խոսակցություն չկա, եւ դրար-դրամ ներկա փոխարժեքի պարագայում, եթե այն պահպանվի 450-460 սահմաններում, կարծում եմ՝ չի լինի, իսկ եթե շարունակի բարձրանալ, արդեն ներմուծող ընկերության համար խնդիրներ կծագեն: Սա զուտ իմ անձնական կարծիքն է, իսկ առհասարակ, մեր վերադաս կառույցում, բնականաբար, կան համապատասխան մասնագետներ, հաշվարկում են՝ ինչն է ձեռնտու ձեռնարկությանը, ինչը՝ ոչ: Եթե համարեն, որ տարադրամի փոխարժեքի փոփոխության

պատճառով ձեռնարկությունը վնասով է աշխատում, քայլեր կձեռնարկեն: Առայժմ մասն խոսակցության հիմքեր չկան: Իսկ ենթադրությունների հիմքն անցած շաբաթվա ընթացքում դրամի գերարժեզրկումն էր եւ իրարանցումն արժույթի շուկայում:

Պետք է հասկանանք, որ «Գազպրոմ Արմենիան» ներմուծող կազմակերպություն է: Գազի համար կա հայ-վրացական սահմանի վրա սահմանված գին, եւ Հայաստանը 1000 խմ-ի համար վճարում է 189 դոլար: Բնակչությունից գազի վարձավճար ենք հավաքում, այդ գումարը փոխարկվում է դոլարի եւ այդպես վճարվում ստացած գազի համար: Եվ եթե դոլարի գինը բարձրանա ավելի մեծ չափով, բնական է, որ գազի համար էլ պիտի ավելի թանկ վճարվի...

– Իսկ ի՞նչ է կատարվում գազի լցակայաններում, ինչո՞ւ բարձրացավ դրանց կողմից մատակարարվող գազի գինը:

– Այստեղ մեկ նրբություն կա. մինչեւ 10 000 խմ գազ սպառողները 1 խմ-ի համար վճարում են ֆիքսված 156 դրամ արժեքը: Իսկ մեկ անսվա մեջ 10 000 խմ եւ ավելի գազ սպառողները վճարում են արդեն այլ հաշվարկով, այդտեղ բանաձեւ է գործում, եւ այդ հաշվարկի մեջ տեղ ունի նաեւ դոլար-դրամ փոխարժեքը: Խոշոր սպառողներ են Սյունիքում, օրինակ, հանքարդյունաբերական կոմբինատները, այլ խոշոր ձեռնարկություններ, ինչպես նաեւ մարզի 13 ավտոգազալիցքավորման կայանները: Դրանք յուրաքանչյուր անսվա սպառած գազի համար վճարում են ըստ նախորդ անսվա 25-ին ՀՀ կենտրոնական բանկի սահմանած դոլարի փոխարժեքի: Այսինքն՝ նրանց վճարման հաշվարկի բանաձեւը ներառում է դոլարի փոխարժեքի փոփոխությունը:

– Իհարկե, գների վերահսկողությունը ձեր գործառնություններից չէ, բայց, Ձեր կարծիքով, որքանո՞վ էր օրինաչափ գազի գնի մասն բարձրացումը:

– Երեսնամյա այս օրերին ավելի վաղ սկսեց գազի թանկացումը եւ հասավ 230-240 դրամի, երբ մեր մարզում դեռ չէր թանկացել: Այստեղ 3-4 օր հետո թանկացավ, բայց մինչեւ 210-215 դրամ: Եվ եթե նայենք

գների տրամաբանությանը, կարծես հիմքեր էլ չունենին թանկացնելու, որովհետեւ այս ամիս սպառած գազի համար վճարելու են նոյեմբերի 25-ի փոխարժեքով: Իրականում, գազալցակայաններում այդ կարգի՝ 10-15 տոկոս թանկացումը համարում եմ անհիմն եւ վաղաժամ: Բայց եւ այստեղ այլ պատճառ եմ տեսնում: Երբ ամիսներ առաջ էլեկտրաէներգիան թանկացավ, գազալցակայանները չթանկացրին գազը, բայց իրենք մեծ քանակի հոսանք էլ են սպառում, եւ նրանցից յուրաքանչյուրի ամսական ծախսը մոտ 300 000 դրամով ավելացավ, շահույթը պակասեց: Ավելացնենք, որ հոկտեմբեր-նոյեմբերին էլ դոլարի փոխարժեքի տատանում եղավ, եւ եթե հոկտեմբերին նրանք 1 խմ գազի համար վճարել էին մոտ 113 դրամ, ապա նոյեմբերին՝ մոտ 121 դրամ: Այս բոլորը երեւի նրանց մեջ մտավախություն ծնեց, որ շահույթը կտրուկ կիջնի, եւ դրամի արժեզրկման ֆոնին շտապեցին բարձրացնել գազի գինը:

Այսինքն՝ նախորդ ամիս էլի մոտ 8 դրամով ավելի եմ վճարել 1 խմ գազի համար, մոտ 2 դրամով էլ 1 խմ-ի մեջ նրանց շահույթը նվազեցրել էր էլեկտրաէներգիայի թանկացումը: Եթե հաշվի առնենք, որ մարզում գազի լցակայանները 100 000-200 000 խմ գազ են սպառում, 1 խմ-ում 10 դրամ կորուստն արդեն նրանց համար զգալի թիվ է: Եվ 10 դրամ թանկացումը գուցե դեռ ինչ-որ տեղ հիմնավորված է, բայց դրանից ավելի հիմնավորում չեմ տեսնում...

Այնուամենայնիվ, իմ անձնական կարծիքն է, վաղաժամ եմ համարում դեկտեմբերին գազ թանկացնել այն առումով, որ դա կապ չունի դեկտեմբերին դոլարի թանկացման հետ:

Դե, միգուցե, այս փոխարժեքային իրարանցման հետ կապված այլ ծախսեր էլ են ավելացել նրանց համար, օրինակ, յուղն է թանկացել, սպասարկման այլ ծառայություններ, որոնցից օգտվում են, գին են բարձրացրել:

– Իսկ Դուք հետեւո՞ւմ եք սպառողների թանկահիմ, թանկացումներն ազդե՞լ են գազալցակայաններում գազի սպառման ծավալների վրա:

– Գազալցակայաններում, անկախ ամեն ինչից, սպառումը ոչ թե նվազում, այլ ավելանում է. միայն մեր մարզում լցակայանների թիվը վերջին տարում ավելացավ երկուսով: Գների այս փոփոխությունն էլ չազդեց. պահանջարկը մույնն է: Ասեմ, որ գազալցակայաններից, բացի անհատներից, հիմնականում օգտվում են տաքսի-ծառայությունները, հասարակական տրանսպորտը, կոմունալ ծառայությունները, սպասարկող, ապրանքների ներմուծման, առաքմանը զբաղվող ընկերությունները եւ այլն... Այս բոլորը, բնականաբար, պիտի շարունակեն աշխատել: Մասնավաճող հիմա էլ՝ Նոր տարվա շեմին, եռուզեռն ավելի է ակտիվացել:

– Եվ քանի որ սա թերթի տարբերության համարն է, առիթից օգտվելով, ի՞նչ եք մտադրում մեր ընթերցողներին՝ ձեր բաժանորդներին:

– Շնորհավորելով բոլորին Նոր տարվա եւ Սուրբ ծննդի տոների կապակցությամբ՝ մաղթում եմ, նախեւառաջ, առողջություն: Թող բոլոր ընտանիքներում լույսը բացվի կապույտ եւ խաղաղ երկնքի ներքո, տան անդամներն արթնանան ուրախ դեմքերով, օրը եւս ապրեն ուրախ. այսօր մեր ժողովրդին ամենաշատը ժպիտն է պակասում... Թող մարդիկ միայն լավ լուրեր լսեն եւ այլեւս հոգեկան բարոյ ապրումներ չունենան՝ կապված փոխարժեքի փոփոխության, թանկացումների հետ: Թող երկրում լինի էժանություն եւ խաղաղություն:

ԱՐԹՈՒՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ

## Ճանաչված երգեհոնահարի անվամբ

**«Կապանի արվեստի պետական ջուլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի հերթական նիստի օրակարգում եղել է նաև ջուլեջի երգեհոնային դահլիճը ՀՀ Ժողովրդական արտիստ, երգեհոնահար Վահագն Պարույրի Ստամբուլյանի անունով կոչվելու հարցը:**



Ջուլեջի տնօրեն Լիաննա Հակոբյանը ներկայացրեց ՀՀ ժողովրդական արտիստ, երգեհոնահար Վահագն Ստամբուլյանի դերն ու ավանդը Հայաստանում, այդ թվում եւ Կապանում, երգեհոնային երաժշտարվեստի կայացման, զարգացման ու տարածման գործում: Վահագն Ստամբուլյանն անգնահատելի ներդրում է ունեցել Սանկտ-Պետերբուրգի Մարիինյան թատրոնից ձեռք բերված երգեհոնը Կապանի երաժշտական ուսումնարանի համերգային մեծ դահլիճում տեղադրելու եւ կարգաբերելու հարցում, որն իրականացվել է 1975 թվականին:

Վահագն Ստամբուլյանն առաջինն է հնչեցրել կապանյան գրանցում ստացած երգեհոնը եւ ողջ գործունեության ընթացքում իր դասարանի սաների հետ պարբերաբար համերգներով հանդես

եկել Կապանում: Անվանի երգեհոնահարը սիրով գիտելիքներն է փոխանցել նաեւ կապանցի շնորհաշատ երաժիշտներին (Աննա Առուստամյան, Մերի Մովսիսյան, Մարինա Նահապետյան), որոնք այսօր էլ հնչեցնում են կապանյան երգեհոնը:

Արժեւորելով Վահագն Ստամբուլյանի նշանակալի ավանդն ու ներդրումը ջուլեջի համերգային մեծ դահլիճում երգեհոնի տեղադրման, Կապանում երգեհոնային երաժշտարվեստի կայացման, զարգացման ու տարածման գործում, Կապանի արվեստի պետական ջուլեջի կառավարման խորհուրդը որոշեց ջուլեջի երգեհոնային դահլիճը կոչել ՀՀ ժողովրդական արտիստ, երգեհոնահար Վահագն Ստամբուլյանի անունով:

ՎԱԳՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



## Վերադարձ ոսկե մեդալներով եւ չեմպիոնական գուրիներով

**Մարզական**

Անցնող տարին մարզական նոր նվաճումներով եւ նշանավորելի քիթքոչսիսի «Գարեգին Նժդեհ» ակումբի մարզիկները (մարզիչ՝ ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյան): Դեկտեմբերի 13-ին եւ 14-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայացել է Եվրասիայի գավաթի խաղարկությունը: Հայաստանը միջազգային այդ մրցմանը ներկայացել էր տասը մարզիկով, որից չորսը ներկայացնում էր քիթքոչսիսի Կապանի «Գարեգին Նժդեհ» ակումբը: Բոլորն էլ վերելքով հանդես եկան՝ բարձր պահելով ոչ միայն մարզի, այլ նաեւ հանրապետության պատիվը: Ապա Գյուլբուրդյանը, Երիկ Մարտիրոսյանը, Արայիկ Ավետիսյանը եւ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ուսանող Շանթ Դավթյանը կանգնեցին պատվո պատվանդանի ամենաբարձր աստիճանին՝ արժանանալով ոսկե մեդալի եւ պատվոգրի: Իսկ Արայիկն ու Շանթը պարգևատրվեցին չեմպիոնական գուրիով: Ընդ որում՝ նրանք եզրափակիչում առավելության հա-

սան արդբեջանցի մրցակցի նկատմամբ: Սա ասվում է ոչ թե դասարկ հայրենասիրությունից ելնելով: Մրցումների ժամանակ նաեւ հոգեբանական խնդիրներ են ծագում, երբ արդբեջանցի համդիսականների խառնամբղին իր գոռում-գոչյուններով ցանկանում է հունից հանել հայ մարզիկներին, բայց մեր տղաները կոտրվողներից չեն...

Մրցումների կազմակերպիչները դիպլոմով պարգևատրել են ակումբի մարզիչ Արայիկ Սարգսյանին՝ չեմպիոններ պատրաստելու համար:

Ինչեւէ, ակումբի մարզիչն ու սաները՝ իրենց երախտագիտությունն են հայտնում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին, «Հայաստանի էլեկտրաբաժնի» փակ բաժնետիրական ընկերության «Տաթեւ» մասնաճյուղի տնօրեն Արայիկ Գրիգորյանին, «Գազպրոմ Արմենիա» ընկերության Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն Արթուր Խաչատրյանին՝ միջազգային մրցմանն իրենց մասնակցությունը հովանավորելու համար:

ՎԱԳՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



# 2015 թվականը՝ Այծի տարի

## Տարին կենդանակերպի նշանների համար



**Ըստ արեւելյան օրացույցի՝ 2015 թվականն Այծի տարի է: Այծը բարի, օգտակար, հոգաբար, մեծահոգի, միաժամանակ պաշտպանության կարիք ունեցող կենդանի է: Նրա այս հատկությունները կարելի է վերագրել նաեւ գալիք տարվան: Այծի տարվա խորհրդանշի լանգի սկիզբն է: Շատ կանայք այս տարի մայր կդառնան: Տարվա փարեքը ծան է, գույնը՝ կապույտը կամ կանաչը: Այն լինելու է խաղաղ, պրոգրեսիվ եւ ուրախ տարի կենդանակերպի բոլոր նշանների համար:**

**խոյեր**  
Խոյերին մի փոքր ծանր տարի է սպասվում այն իմաստով, որ բավականին բարձր ենթագետիկ լարվածություն է լինելու նրանց մոտ, եւ հնարավոր է առողջական խնդիրներ առաջանան՝ զուտ ենթագետիկ կորստով պայմանավորված: Սակայն աստղերի կողմից, որպէս կոմպենսացում, կտրվեն բարենպաստ պայմաններ, որոնք կշտկեն նրանց ենթագետիկ բացերը եւ առողջական խնդիրները:

**Ցլեր**  
Ցլերի պարագայում ունենք հազվագյուտ բարեհաջող տարի, որը վերաբերում է եւ ֆինանսական կողմին, եւ կարիերային: Կարելի է ասել՝ բացահայտումների տարի է լինելու: Նոր աշխատանք, ուսում, կարիերա, այն, ինչը վերաբերում է նորին: Փոփոխությունները, որոնց Ցլերն այդքան երկար տարիներ սպասել են, կիրականան այս տարի: Դրանց համար հիանալի պայմաններ կստեղծվեն:

**Երկվորյակներ**  
Երկվորյակների համար տարին նույնպէս առանձնահատուկ է եւ շատ բարեհաջող: Նրանց խորհուրդ է տրվում իրենց հիմնական ուշադրությունը դարձնել խոսքի վրա, զարգացնել խոսքի կարողությունը, հետադարձ կարգով արվեստը, քանի որ խոսքի միջոցով երկվորյակները կարող են անել ավելին, քան գործով: Նրանք հակված են բարձրորակ աշխատանքի, իսկ այս տարի դրան գումարվում է նաեւ խոսքը, ինչի միջոցով կարող են ավելի հեշտ հասնել հաջողությունների:

**Խեցգետիններ**  
Խեցգետինների համար շատ բարեհաջող տարի է, եւ այն կարծրա-

ցած, սառն իրավիճակը, որ նրանք ունեն կրճից 3-4 տարիներին, ինչպէս նաեւ սթրեսային վիճակը, արդեն կտրվում է: Նրանց համար դա բնականոն ընթացք կունենա, եւ բավական լավ հնարավորություններ կստեղծվեն՝ արտահայտելու ենթագետիկ ուժը: Այդ առումով բավական ստացված եւ հազեցած տարի է սպասվում:

**Առյուծներ**  
Առյուծների համար նույնպէս տարին հաջողված է, եւ նրանք նույնպէս շեշտը պետք է դնեն խոսքի, հետադարձ կարողությունների զարգացման վրա: Արդարացված կլինեն ռիսկային քայլերը եւ կամքի հզոր արտահայտումը:

**Կույսեր**  
2015-ին Կույսերը կարող են վերջնական որոշում կայացնել եւ կտրուկ փոխել իրենց կյանքը: Դա կարող է վերաբերել այլ երկիր մեկնելուն, այլ՝ բարձր որակի կարիերայի ստեղծմանը, այսինքն՝ համարձակ գործունեությունը լրիվ արդարացված է: Կույսերն արդեն կուտակել են այն բոլոր կարողությունները, որոնք 2015-ին հնարավորինս լավ եւ վառ ձեռով կարտահայտվեն:

**Կշեռքներ**  
Բոլոր 12 նշաններից միայն Կշեռքներն են, որոնց մասին կարող ենք ասել, որ լավագույն նշանի տարին է: Ռիսկային գործունեությունը, բարեհաջող իրավիճակներից առավելագույն օգուտ քաղելու կարողությունը Կշեռքների հետ կլինի ամբողջ տարի: Տարին այնքան բարեհաջող է, որ ավելացնելու բան չունենք: Կշեռքներն իրենք ինտուիտիվ կզգան, թե ինչ հզոր եւ լավ տարի է սպասվում իրենց:

**Կարիճներ**

Կարիճներին մի փոքր բարդ տարի է սպասվում: Հիմնական զգուշացումը վերաբերում է ճանապարհներին: Ճանապարհորդելիս խորհուրդ է տրվում, որ այն հնարավորինս արդարացված լինի, այսինքն՝ ուսում, խիստ անհրաժեշտ բիզնես ուղեւորություն եւ այլն: Հենց այնպէս ճանապարհորդելը պետք է թողնել եւ ճանապարհ ընկնել միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Հոգեբանական առումով ծանր իրավիճակներ կարող են առաջանալ, որոնցից հետո դուրս գալը դժվար կլինի:

**Աղեղնավորներ**  
Աղեղնավորների պարագայում յուրահատուկ բարեհաջող տարի է սպասվում: Նրանք վերջին 5-6 տարիներին մեծ աշխատանք են տարել, որպէսզի կարողանան իրենց երջանկությունը կառուցել: Նրանց մոտ սա յուրահատուկ ուղղությամբ է գնում: Այս տարի շատ ուժեղ արտահայտված է տղամարդկային ենթագիտ, ինչն իր հերթին կարտահայտվի ամուր ընտանիքներ, նոր կապեր ստեղծելով, որոնք նույնպէս կլինեն ամուր եւ երկարատեւ: Կարիերայում նույնպէս շատ մեծ հաջողություններ կան. աննախադէպ քիչ ենթագիտ ծախսելով՝ առավելագույն հաջողությունների կհասնեն:

**Այծեղջյուրներ**  
Այծեղջյուրների համար գալիք տարին ընտանիքի բարեկեցության, ամրացման, նոր հիմքերի ստեղծման տարի է: Քանի որ Այծեղջյուրի եւ Այծի տոտեմը դիմամիկ կերպով առնչվում են միմյանց հետ, հետեւաբար Այծեղջյուրների համար հազվագյուտ բարեհաջող տարի է, որի հիմքը դրվել է դեռ 2014 թվականից եւ գնալով ավելի բարեհաջող է դառնալու:

**Ջրհոսներ**  
Ջրհոսներն այս տարի հնարավորություն կունենան շունչ քաշելու, քանի որ այն փոփոխություններին, որոնք տեղի են ունենում նրանց կյանքում եւ որոնք բավականին երկարատեւ են, այս տարի մի փոքր դադար է տրվելու: Այդ լավ եւ վատ փոփոխությունները, որոնք արագ-արագ առաջանում եւ անցնում էին, այս տարի ավելի կայուն հիմքի վրա կլինեն, սակայն դա տրվում է գուտ շունչ քաշելու համար: Տարվա ընթացքում լավ հնարավորություններ կլինեն բոլոր սխալները շտկելու համար: Մեծ պաշտպանվածություն կա, որից ցանկալի է, որ հնարավորինս օգուտ քաղեն բոլոր Ջրհոսները: Ճանապարհները խոստանում են լինել շատ բարենպաստ, այնպէս որ՝ խորհուրդ կտայինք շատ ծանփորդել, տեղում չմնալ:

**Չկներ**  
Չկներին մի փոքր բարդություն է սպասվում անշարժ գույքի եւ տնտեսական, ֆինանսական հարցերի հետ կապված, որոնք կարող են շտկվել՝ մեծ աշխատանք տանելով: Շատ ենթագիտ կպահանջվի Չկներից, բայց հաջողությունն ուղեկից կլինի նրանց:

news.am

## ՀԱՅԻ ՈՒԿԻՆ

ՍԿԻՉԲԸ ԷՏ 1

յին կյանքի պատմության շատ մութ տեղերի հետ միասին լույս կծգի են մեր անցկացած երկար ու դժար ճամփի վրա մինչեւ նրա սկիզբը, որ ինչքան թանկ է մեզ համար, էնքան էլ վեր է մեր ուժերից: Բայց մեր ուժերից վեր հո չի նայել, քննել, ճանաչել մեր երեկն ու տօրը:

Էքսան փորձություն ու տառապանք ունեցած մի ժողովրդի անվայել է անգիտանալ իր կյանքը ու ծփալ, տարուբերել ժամանակի ակնկոծության քնահաճույքին անձնատուր: Եթե էդ դրությունը հասկանալի է խավար բազմության համար, ներելի չի ինտելիգենցիային, որ ինչքան էլ ընդհանուր առումով խորթ լինի եւ ժողովրդին իր հոգով ու կենցաղով, այնուամենայնիվ իր մեջ պետք է ունենա եւ ունի մարդիկ, որոնք ապրում են էդ ժողովրդի կյանքն ու պատմությունը: Նրանք առաջ պետք է անցնեն, որոնք, ցույց տան, թե որն է եւ ժողովրդի ճանապարհը:

Մեզանում, հիրավի, ճանապարհներ կան որոշած, բայց դրանք եւ կամ են կուսակցությանն են կամ լրագրից: Ամեն ազգի մեջ կան եւ միշտ կլինեն ամեն տեսակի հասարակական ու քաղաքական կուսակցություններ ու հոսանքներ, բայց բոլորովին ուրիշ բան է ժողովրդի ամբողջությունը:

Այո, լինում են դեպքեր, մի որեւէ

հոսանք ուժ է առնում ու ժամանակավոր եւ կամ են կողմը քաշում կյանքն ու մարդկանց ուշքը, բայց դրանք մոմենտներ են ամեն ժողովրդի կյանքի մեջ, որոնցից ոչ մինը առանձին վերցրած պատասխան չի տալ դրված հարցին, եւ նա դարձյալ կխոսի ու պատասխան կուզի, թե ո՞րն է եւ ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյության խորհուրդը. ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ուր որոնենք էդ ոգին: Արդյոք Սասունի, Չեթունի, Մոկաց, Արարաբաղի ու Լոռու սարերում, թե՞ Շիրակի, Արարատի ու Մուշի դաշտերում: Արդյոք հին վանքերի միստիք կամարների տա՞կ, ուր ծավալվում է «խորհուրդ խորին անհաս եւ անսկզբ», թե՞ դալար մարգերում ու խաղահանգիստ հովիտներում, ուր «Լուսնյակն անուշ, հովն անուշ, շինականի քունն անուշ»: Արդյոք «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» խոսողի երկնաչու պաղատանքն էրի մեջ, թե՞ «Վերք Հայաստանիի» հայրենասիրական ողբի հառաչանքների ու մորմոռների մեջ:

Իհարկե, եւ ամեն տեղերում, եւ ամենի մեջ: Եվ ի՞նչքան մեծ է խաղաղ կյանքի ու խաղաղ աշխատանքի կարողութեւն ամեն տեղերում ու ամենի մեջ, խորթ արյունի ու պատերազմի, խորթ սրածուրբան ու ավերածության...

Ո՞րն է հայ ժողովրդի ոգին եւ ի՞նչ է ուզում նա:

1910թ.

## «Գանձասարը» լուրջ փորձությունների առաջ

Ֆուտբոլ  
ՍԿԻՉԲԸ ԷՏ 7

ներից եւ հրավիրելու նորերին, որ «Գանձասարը» պիտի ունենա 18-20 հավասար հնարավորություններով ֆուտբոլիստ: Այսինքն՝ փոխարինողների նստարանն ավելի երկար պիտի լինի: Այլապէս, ըստ մարզչի, պահեստայինների նստարանին տեղ են գրաւեցնում երկրորդ թիմի՝ սակավ փորձ ունեցող ֆուտբոլիստները: Բացի դրանից, նոր ֆուտբոլիստների ներգրավման շնորհիվ մրցակցությունը խաղային դիրքերում ավելի մեծ կլինի: Տպակցությունն այնպիսին էր, որ Պուչկովը կզլխավորի թիմը հետագայում եւս...

Բայց, ինչպէս ասում են, ուրբաքն ավելի շուտ եկավ, քան շաքաթը: Անմիջապէս կտրուկ փոփոխություններ եղան թիմում: Պաշտոնակալ եղավ ոչ միայն թիմի ուկրաինացի գլխավոր մարզիչը, այլեւ հեռացան թիմում խաղացող ուկրաինացի վեց ֆուտբոլիստից չորսը՝ Անտոն Մոնախովը, Բորիս Օռլովսկին, Ալեքսեյ Պիճուկը, Արտյոմ Պրոշենկոն: Երբ Սերգեյ Պուչկովին հրավիրեցին «Գանձասարը» գլխավորելու, պայմանավորվածություն կար, եթե թիմն առաջնության աշխատանքի փուլը չավարտի առաջին եռյակում, ապա նրա հետ չի շարունակվի համագոր-

ծակցությունը, ինչը եւ տեղի ունեցավ: Ուկրաինացի խաղացողներից (ի դեպ՝ զարմանային մրցաշրջանում «Գանձասարի» լեգենդներների հիմնական մասն ուկրաինացի ֆուտբոլիստներ էին) թիմում մնացել են Վասիլի Պալազյուկն ու Մարատ Դաուրովը:

Հիմա «Գանձասար» ֆուտբոլային ակումբի ղեկավարությունը պիտի մտածի ոչ միայն նոր խաղացողներ ձեռք բերելու մասին, այլեւ լրացնելու գլխավոր մարզչի թափուր տեղը: Առաջին պլանին է նաեւ մրցաշրջանի դադարի այս փուլում ուսումնամարզական հավաքի անցկացումը: Այնպէս որ ձմռան շրջանում «Գանձասարը» լուրջ փորձությունների առջեւ է: Ուշագրավ է, որ երիտասարդ խաղացողներով համարված «Գանձասար»-2-ը եւս հանգրվանեց առաջնության աղյուսակի չորրորդ հորիզոնականում:

Առաջնությունը կվերսկսվի 2015 թվականի մարտի 1-ին, իսկ սեփական հարկի տակ կապանյան ակումբը զարմանային անդրանիկ պաշտոնական հանդիպումը կանցկացնի մարտի 7-ին՝ հյուրընկալելով առաջնության առաջատար Երեւանի «Ուլիսիս»:

ՎԱԳՐԱՍ ՕՐԲԵՅԱՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է Երեք սենյականոց բնակարան Կապանի թունանյան 9 ջեռից 5-րդ հարկում (թատրոնի հարեւանությամբ): Սանրամասն տեղեկությունների համար զանգահարել (077) 062802 հեռախոսահամարով:

## Շարադրությունների մրցույթ՝ նվիրված Սերո Խանգադյանի ստեղծագործական ժառանգությանը

Սյունիքի մարզպետարանը եւ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը հայտարարում են շարադրությունների մրցույթ՝ «Կարդալով Սերո Խանգադյանի ստեղծագործությունները» թեմայով: Մրցույթին կարող են մասնակցել մարզի բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցների սովորողները: Մրցույթի արդյունքներն ամփոփելու վերջնաժամկետը 2015թ. մայիսի 1-ն է: Լավագույն երեք շարադրությունը կիրապարակվի «Սյունյաց երկիր» թերթի՝ Սերո Խանգադյանի 100-ամյակին նվիրված հատուկ համարում, իսկ հեղինակները կարժանանան դրամական պարգևի:

Սյունիքի մարզպետարան  
«Սյունյաց երկիր»

## Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝  
**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՐԱՏՄԱՎԻՉ  
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾՈՒԿ  
ՊՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
Հեռախոս՝ (0285) 5 25 63,  
(091) 45 80 47,  
(077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհանձնելու:

Լայնթերթը ներկայացնում մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՆՎԱՅՐ - ՇԱՆՈՒՄՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

© Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 26.12.2014թ.: